Ուսուցիչներ Արցախից

Նպատակ

Մենք ձգտում ենք ունենալ այնպիսի Հայաստան, որտեղ յուրաքանչյուր երեխա՝ անկախ իր սոցիալ-տնտեսական կարգավիճակից, հնարավորություն կունենա գերազանց կրթության շնորհիվ բացահայտել իր ողջ ներուժը: Կրթությունը ոչ միայն գիտելիք է փոխանցում, այլեւ սերմանում է հույս եւ տանում է դրական փոփոխությունների: Տարեկան ընդամենը 10,000 ԱՄՆ դոլարով մենք կարող ենք մեծ ազդեցությունն ունենալ՝ մեկ ուսումնական տարի «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի երկու Ուսուցիչ-առաջնորդի հովանավորելով:

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ի **Nation-Builders** ծրագիրը բոլոր շահագրգիռ անձանց եւ կազմակերպությունների՝ անկախ իրենց աշխարհագրական տեղակայությունից, հնարավորություն է ընձեռում նպաստել Հայաստանի զարգացմանը՝ կրթության ոլորտում ներդրում կատարելով: Ծրագրի շրջանակում որպես **Nation-Builders**, մեր աջակցությամբ երկու Ուսուցիչ-առաջնորդներ կտեղակայվեն Հայաստանի երկու գյուղական դպրոցներում մեկ ուսումնական տարով: Երկու Ուսուցիչ-առաջնորդներն էլ բռնի տեղահանվել են Արցախից 2023 թվականի սեպտեմբերին: Նրանք այժմ ապրում են Հայաստանում եւ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի աջակցությամբ վերատեղակայվել են Արմավիրի եւ Կոտայքի մարզի դպրոցներում:

Ծրագրի նկարագրություն

«Դասավանդիր Հայաստան»-ը մեծ ազդեցություն տարածող հասարակական կազմակերպություն է, որը հանձնառել է փոխակերպել կրթությունը Հայաստանում: Նրանց առաքելությունը պարզ է՝ վերացնել խոչընդոտները եւ ստեղծել հավասար կրթական հնարավորություններ յուրաքանչյուր երեխայի համար՝ անկախ նրանց սոցիալ-տնտեսական ծագումից: «Դասավանդիր Հայաստան»-ը հավաքագրում ու վերապատրաստում է բացառիկ շրջանավարտների եւ մասնագետների, որոնք դառնում են Ուսուցիչ-առաջնորդներ եւ առնվազն երկու տարի դասավանդում են Հայաստանի գյուղական համայքների ամենաանապահով հանրային դպրոցներում:

Երկամյա ծրագիրն ավարտելուց հետո, Ուսուցիչ-Առաջնորդները դառնում են Շրջանավարտ-դեսպաններ, որոնց մեծ մասը շարունակում է աշխատել կրթության ոլորտում: Այս կերպ «Դասավանդի՛,ր Հայաստան»-ը լրացնում է ուսուցիչների պակասը Հայաստանի գյուղական համայնքներում եւ վերափոխում է դասավանդումն ու ուսումը ողջ երկրում:

«Դասավանդի՛,ր Հայաստան»-ը հիմնադրվել է 2013 թվականին եւ 2017 թվականից գործել է նաեւ Արցախում: Հավանաբար կհիշեք, որ 2023 թվականի օգոստոսին միասին նախաձեռնել էինք արշավ՝ դառնալու Արցախի երեք դպրոցական համայնքների **Nation-Builders**: Ցավոք սրտի 2023 թվականի սեպտեմբերի իրադարձությունների պատճառով ստիպված եղանք դադարեցնել այդ արշավը:

Այսօր եւս մեկ անգամ դիմում ենք Ձեզ աջակցության համար, քանի որ վերսկսում ենք նախագիծը, որպեսզի մեկ տարի ֆինանսավորում ապահովենք Արցախից տեղահանված երկու նվիրյալ Ուսուցիչ-առաջնորդի համար: Այս երիտասարդները չնայած բոլոր դժվարություններին, այժմ իրենց կարողություններն են ներդնում Հայաստանի, ինչպես նաեւ իրենց հայրենիքից տեղահանված երեխաների կրթության մեջ:

Ձեր աջակցությունն ու ներդրումը մեկ տարուց ավելի երկար ազդեցություն է ունենալու: Գիտելիքն ու ոգեւորությունը, որ այս Ուսուցիչ-առաջնորդները փոխանցում են իրենց աշակերտներին՝ նրանց ուղեկցելու է դեռ երկար տարիներ: Միանալով «Դասավանդի՛,ր Հայաստան»-ի **Nation-Builder** ծրագրին՝ Ayo!-ի ընտանիքը նպաստում է բարեփոխման, զորեղացման եւ առաջընթացի հաստատմանը:

Բյուջե

Նպատակ	#	1 տարվա աջակցություն	Ընդամենը ՀՀ դրամ
Ուսուցիչ-առաջնորդ	2	2,000,000	4,000,000

Ընդհանուր

Փոխարժեք՝ 1 ԱՄՆ դոլար = 402.4 ՀՀ դրամ

֏4,000,000